ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԲԺԻՇԿԻ ՀԱՆՐՕԳՈՒՏ ԾՐԱԳԻՐԸ

Posted on November 14, 2014 by Keghart



Category: Opinions

Հարցազրույց՝ Լիբանանահայ Բժիշկ, Անեսթեզիոլոգ
Պօղոս Գարավերտեանի Հետ

Համօ Մոսկոֆեան, Պէյրութ, 12 Նոյեմբեր 2014

Բժիշկ Պօղոս Գարավերտեանը Շրջանաւարտ է Երեւանի Պետական Բժշկական ինստիտուտից (1972): Մասնագիտացել է որպէս անեսթեզիոլոգ Երեւանի կլինիկական հիւանդանոցում, ապա ուսումը շարունակել է Պէյրութի Ամերիկեան համալսարանում: 1979 թ.ին տեղափոխուել է «Սուրբ Գէորգ» հռչակաւոր հիւանդանոցը ուր պաշտօնավարում է մինչեւ այսօր:

Համո Մոսկոֆեան.- Կարո՞ղ էք ծանօթացել Յոյն և Ռուս-Ուղղափառ եկեղեցիների ջանքերով կառուցուած «Սուրբ Գէորգ» հռչակաւոր հիւանդանոցը:

Հարցազրույց՝ Լիբանանահայ Բժիշկ, Անեսթեզիոլոգ
Պօղոս Գարավերտեանի Հետ

Համօ Մոսկոֆեան, Պէյրութ, 12 Նոյեմբեր 2014

Բժիշկ Պօղոս Գարավերտեանը Շրջանաւարտ է Երեւանի Պետական Բժշկական ինստիտուտից (1972): Մասնագիտացել է որպէս անեսթեզիոլոգ Երեւանի կլինիկական հիւանդանոցում, ապա ուսումը շարունակել է Պէյրութի Ամերիկեան համալսարանում: 1979 թ.ին տեղափոխուել է «Սուրբ Գէորգ» հռչակաւոր հիւանդանոցը ուր պաշտօնավարում է մինչեւ այսօր:

Համո Մոսկոֆեան.- Կարո՞ղ էք ծանօթացել Յոյն և Ռուս-Ուղղափառ եկեղեցիների ջանքերով կառուցուած «Սուրբ Գէորգ» հռչակաւոր հիւանդանոցը:

Դոկտ. Պօղոս Գարավերտեան.- Յոյն-Ուղղափառ եկեղեցւոյ և համայնքին պատկանող «Պալամանտ»ի համալսարանը (University of Balamand) և «Սուրբ Գէորգ» հիւանդանոցը 138-ամեայ պատմութիւն ունեն: Շինարարութեան ծախսերին օժանդակել է Մոսկուայի Ռուս-Ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքը...: Հիւանդանոցի գլխաւոր տնօրէնը Պէյրութի Մետրոպոլիտ Աւուտէ եպիսկոպոսն է: Անշուշտ, այս կառոյցը ղեկավարւում է ենթակայ գիտական և վարչական յանձնախմբերով: Այն կցուած լինելով համալսարանին՝ ունի իր վարչական և բժշկական տնօրէնութիւնը, ղեկավարուած բժշկական կոմիտէի ու տնօրէնի կողմից, որ բաղկացած է բժիշկներից: Իւրաքանչիւր 5 տարին ընտրուող բժշկական կոմիտէն պատասխանատու է գիտական, ուսումնական հոլովոյթի հետեւմանը:

ՀՄ.-Ինպէ՞ս կարելի է օգտակար լինել հայազգի հիւանդներին:

Դոկտ. ՊԳ.- Այսօր, իմանալով որ Մայր Հայրենիքի “ներքին” և “արտաքին” Սփիւռքի հայ հիւանդները մեկնում են Եւրոպայի և Ամերիկայի հիւանդանոցներում բուժում ստանալու համար, շատ թանկ վճարելով բժշկական այդպիսի ծառայութիւններին, մտածեցի նման բուժումներ և վիրահատութիւններ կազմակերպել մեր մօտ, միջազգային բարձրագոյն մակարդակով և գրեթէ քառորդ գնով:

Մեր մասնագէտները արեւմտա-եւրոպական և ամերիկեան բժշկական համալսարանների շրջանաւարտներ են, որոնց ընտրութիւնը որոշում է հիւանդանոցի կոմիտէն, քննարկումից յետոյ: Մի խօսքով՝ ժամանակակից ամէն ինչ ունենք այստեղ, բոլոր տեսակի բուժումներ, սկսած ուղեղից՝ մինչեւ հոգեբանական, սրտանօթային վիրահատութիւններ շատ յաջող կերպով կատարւում են:

Այսօր, Լիբանանի լաւագոյն 5 հիւանդանոցներից մէկն ենք: Պիզնեսային աշխարհ է և յաջողելու համար չենք խնայում ոչ մի բան: Այսինքն՝ ինչ որ կայ բժշկական աշխարհում՝ ունենք:

Միտք բանին ա՛յն է, որ կարենալ օգտակար լինել ի՛մ հային...: Ինչի՞ համար նա գնայ արտասահմաններ և շատ աւելի թանկ վճարի բուժման համար: Նրանք, ովքեր ցանկանում են կապ հաստատել ինձ հետ և իմանալ հիւանդանոցի բուժումների գները՝ կարող են կապնուել համացանցով՝ drbkaravetian@gmaildotcom հասցէով ու ես անմիջապէս կը պատասխանեմ:

Մնացեալ սոցիալական հարցերը, օդակայանից տեղափոխումը, հիւրանոցային կեցութիւնը, հեշտութեամբ կարող ենք կարգաւորել, այստեղի բարեխնամ հայերի (յատկապես Երեւանի և Մոսկուայի հայրենակիցների) յատուկ ջանքերով: Արդէն Մերձաւոր Արեւելքի երկրներից ունենք բազմաթիւ հիւանդներ, որոնք գալիս, բուժւում և շարունակում են իրենց կեանքը:

ՀՄ.- Որո՞նք են ձեր հետագայ ծրագրերը:

Դոկտ. ՊԳ.- Ինչպէս ասուեց, որպէս մասնագէտ բժիշկ, օգնել իմ հայ հիւանդին: Ապա որպէս աւագ բժիշկ--House physician կարող եմ ուրիշ հայ բժիշկներ էլ բերել այստեղ և մասնագիտացնել: Եթէ կարողացան իրենց գիտելիքները ապացուցել, այստեղ կ'ունենան կացարան, աշխատավարձ, բաւարար թոշակ և շատ լաւ մասնագիտանալուց յետոյ՝ կը վերադառնան: Մեր համալսարանը կապ ունի Ֆրանսիայի Թուլուզ քաղաքի ուսումնական կենտրոնների հետ: Մեր շրջանաւարտները այստեղ աւարտելուց յետոյ տեղափոխւում են Թուլուզ, շարունակելու իրենց ուսումը: Ապա որոշում են ո՛ր կողմ "թեքուել": Մի մասը վերադառնում է, ուրիշներ նախընտրում են մնալ Եւրոպայում կամ անցնել Ամերիկա:

ՀՄ.- Համեմատական կագով կարե՞լի է նշել մի յիշարժան պարագայ:

Դոկտ. ՊԳ.- Ցանկանում եմ որպէս եզրակացութիւն փոխանցել մի յատկանշական դէպքի մասին: Երբ հիւանդներից մէկի երկու ազդրոսկրները պէտք է վիրահատէին և պրոտեզ (prosthesis) դրուէր Գերմանիայում՝ 42,000 եւրոյի գումարով, մենք այստեղ, նոյն վիրահատութիւնը, լաւագոյն բժիշկներով ու պրոտեզներով կատարեցինք միայն 22,000 տոլարով: Այնպէս որ շատ աւելի համեստ գներով կարելի է հիւանդին վերադարձնել կեանքն ու առողջութիւնը: